Պրոֆեսիոնալ մոտեցում թրեյդինգին

Շաբաթական Զեկույց
24 դեկտեմբեր 2014

Հասկանալ ֆինանսական շուկաները, տեղեկատվությունը և վերլուծությունները գիտակցված ներդրումների նպատակով

Ձեզ են ներկայացնում TeleTRADE Հայաստանի շաբաթական զեկույցների շարքի յոթերորդ հրապարակումը՝ առաջարկելով միջազգային շուկայական միտումների և ֆինանսական ու տնտեսական զարգացումների բազմակողմանի վերլուծություն՝ կենտրոնանալով Հայաստանի վրա, բայց նաև անդրադառնալով համաշխարհային շուկայական միտումներին և զարգացումներին ԱՄՆ-ում,Եվրոպայում և Ասիայում:.

Ձեր ուշադրությանը ներկայացնում ենք՝

- Ամերիկյան տնտեսությունը աճեց ավելի, քան կանխատեսվում էր և ՀՆԱ-ն երրորդ քառորդում 3,1 տոկոս աճ գրանցեց՝ դառնալով աճի ամենաարագ ցուցանիշը 2011թ. չորրորդ քառորդից: Ներդրողների վստահությունը ամրապնդվեց, քանզի արտահանումները ավելացան, իսկ ներմուծումները նվազեցին: Կտրուկ աճ գրանցեցին նաև տների վաճառքները:

- Հունաստանին տրամադրած նոր և ավելի ընդարձակ օգնության փաթեթը վստահեցրեց ներդրողներին, որ Հունաստանը կմնա եվրոզոնայում, թեպետ Եվրոպական շուկաները շարունակում են մտահոգված մնալ Իսպանիայի՝ 2012թ. դեֆիցիտի թիրախին հասնելու կապակցությամբ, ինչպես նաև քաղաքական անկայունության աճով Իտալիայի կառավարության անսպասելի ստիպված հրաժարականից հետո:

- Ներդրողները ասիական շուկաներում մտահոգված էին չինական արժեթղթերի՝ իրենց 4 ամսյա բարձրագույն մակարդակներից կտրուկ անկումից հետո, սակայն հաջորդ տարի կանխատեսվում է 8,4 տոկոս տնտեսական աճ: Ճնշումը ուժեղացավ ճապոնական նորընտիր կառավարության վրա պետական միջամտության ավելի ակտիվ քաղաքականություն որդեգրելու առումով: Ճապոնիայի կենտրոնական բանկը կգնի շոշափելի ծավալով պետական պարտատոմսեր և կվերանայի իր ինֆլյացիոն թիրախը Ճապոնիան դեռևս տառապում է թույլ արտահանումների և նվազող արդյունաբերական արտադրանքի պատճառով:

- ԵՄ-ն զգուշացրեց Հայաստանին, որ վերջինս ի վիճակի չի լինի Եվրոպական Միության հետ հասնել ընդարձակ ասոցացման պայմանագրի, եթե միանա Ռուսաստանի կողմից առաջարկած մաքսային միությանը: Հայաստանը, սակայն, մոտենում է ազատ առևտրի պայմագրի բանակցությունները ավարտելուն, ի հեճուկս Ռուսատանի ավելի մեծ ճնշումներին «Եվրասիական Միությանը» միանալու նպատակով: Հայաստանը նաև հանձնառու է մնում Եվրոպայի հետ առևտրային և ներդրումային կապերը խորացնելու առումով և վերջերս ԵՄ-ի հետ ստորագրեց վիզայի ազատականացման նոր համաձայնագիր՝ թեթևացնելով վիզային ռեժիմը Հայաստանի քաղաքացիների հետ:

Ամերիկյան տնտեսությունը աճում է կանխատեսվածից առավել:

Ամերիկյան տնտեսությունը աճեց ավելի, քան կանխատեսվում էր և ՀՆԱ-ն երրորդ քառորդում 3,1 տոկոս աճ գրանցեց՝ դառնալով աճի ամենաարագ ցուցանիշը 2011թ. չորրորդ քառորդից (տե՛ս գրաֆիկը): Ներդրողների վստահությունը ամրապնդվեց, քանզի արտահանումները ավելացան, իսկ ներմուծումները նվազեցին, ինչպես նաև կառավարության ծախսերը ավելացան 3,9 տոկոսով, ինչը կապված էր տեղական և պետական իշխանությունների կողմից շինարարության ծավալների միաժամանակյա ընդլայնման հետ: Այլ դրական նշաններ, որոնք մատնանշեցին ԱՄՆ-ի տնտեսության ավելի խորը բարելավումը ներառեցին նաև նոյեմբերին առկա տների վաճառքներում 5,9 կտրուկ և 14,5 տոկոս տարեկան աճը `դառնալով երեք տարիների ընթացքում ամենամեծ վերելքը:



Ավելի մեծ վստահություն Եվրոպայում.

Հետևելով ԵՄ-ի ֆինանսների նախարարների վերջին որոշմանը՝ Հունաստանին տրամադրել օգնության երկար սպասված 49.1 միլիարդ եվրո ($64 միլիարդ) փաթեթը, ներդրողները լայնորեն համոզվեցին, որ Հունաստանը կմնա եվրոզոնայում: Ներդրողների վստահությունը ամրապնդվեց նաև այն բանից հետո, երբ Standard & Poor’s-ը անցած շաբաթ բարձրացրեց Հունաստանի վարկանիշը՝ նախկին մակարդակից գնահատելով ավելի բարձր: Թեպետ Հունաստանը ճգնաժամի 6 հաջորդական տարիներից հետո դեռևս ունի խորը տնտեսական խնդիրներ, Հունաստանի կառավարությանը օգնելու ԵՄ-ի հանձնառությունը շարունակում է մնալ ամուր, հատկապես, երբ Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելին վերջերս հաջողվեց հաղթահարել Հունաստանին հավելյալ ֆինանսական օգնություն տրամադրելու շուրջ Գերմանիայում առկա վաղեմիդիմադրությունը:

Այդ ընթացքում Իսպանիան շարունակում է մաքառել 2012թ. դեֆիցիտի թիրախին հասնելու համար, քանզի երկրի տնտեսական անկումը սահմանափակել է Իսպանիայի պատմության ընթացքում ամենախոշոր ծավալի բյուջետային կրճատումների ազդեցությունը: Ընդհանուր առմամբ, կանխատեսվում է, որ եվրոզոնայի չորրորդ ամենախոշոր տնտեսությունը կնվազի վեցերորդ քառորդն անընդմեջ դեկտեմբերի և դրան հաջորդող երեք ամիսների ընթացքում: Իսպանիայի գործազրկությունը արդեն իսկ ամենաբարձրն է Եվրոզոնայում. աշխատուժի ավելի քան քառորդը գործազուրկ են: Թեպետ Իսպանիայի կառավարությունը դեռևս չի խնդրել եվրոպական օժանդակություն, տնտեսությունը կանգնած է կառուցվածքային մարտահրավերների առջև՝ ներառելով բյուջետային լուրջ դեֆիցիտ, որը հավասար է ՀՆԱ-ի մոտ 4,4 տոկոսին: Ահագնանում է նաև սոցիալական անվտանգության և թոշակային համակարգում ընդհանուր արտադրության 1 տոկոսանոց ամդունդը: Վերջերս, սակայն, դրական նշաններ ի հայտ եկան, քանի իսպանական արտահանումների ծավալները հոկտեմբերին աճեցին 8,7 տոկոսով անցյալ տարվա համեմատ, և առևտրային դեֆիցիտը կրճատվեց 28 տոկոսով տարվա առաջին տասը ամիսների ընթացքում նվազող աշխատուժի պատճառով, ինչը օգնեց դարձնել ապրանքները ավելի մրցակցային: Իսպանիայի կառավարությունը վերջերս համաձայնություն տվեց ԵՄ-ի թիրախներին, մասնավորապես 2012թ. համար նախատեսված ՀՆԱ-ի դեֆիցիտի 6,3 տոկոս թիրախին, թեպետ դիտարդներից շատերը կանխատեսում են ճգնաժամի խորացում 2013թ.:

Եվրոպական շուկաները, սակայն, սասանվեցին իտալական կառավարության անսպասելի անկման պատճառով, քանզի նախագահ Ջորջիա Նապոլիտանոն կազմալուծեց խորհրդարանը այն բանից հետո, երբ վարչապետ Մարիո Մոնտին ստիպված եղավ հրաժարական տալ այդ պաշտոնում 13 ամիս մնալուց հետո: Հրաժարական տված վարճապետ Մոնտին, ով տպավորիչ աճ գրանցեց ներդրողների վստահությունը վարականգնելու հարցում՝իրականացնելով 20 միլիարդ եվրո ($26.5 միլիարդ) ծավալով ցավալի կրճատումները ու կոշտ միջոցառումները, ստիպված եղավ հրաժարական տալ խորհրդարանում մեծամասնությունը կորցնելու պատճառով, երբ նախկին վարչապետ Սիլվիո Բերլուսկոնինդադարեցրեց աջակցությունը:

Հավանաբար, փետրվարի վերջերին նախանշված ընտրություններում Մոնտին կարող է վերադառնալ, որպես կենտրոնամետ կուսակցությունների միավորման թեկնածու, որոնք կաջակցեն նրան եվրոզոնայի երրորդ խոշոր տնտեսության բարեփոխումների շարունակության պլատֆորմի վրա: Ընտրություններում լավ արդյունք է ցուցադրում հակառակորդ և նախկին կոմունիստ Պիեր Լուիջի Բերսանին: Քանզի Իտալիայի

տնտեսությունը 2001թ. արդեն չորրորդ ճգնաժամի մեջ է և 2012թ. կանխատեսվում է 2,1 տոկոս անկում, ինչպես նաև հաշվի առնելով 13 տարվա 11,1 տոկոսանոց բարձրագույն մակարդակին գտնվող գործազրկության մակարդակը, ընդհանուր վստահությունը Իտալիաում այժմ լրջորեն վտանգված է քաղաքական անկայունության ահագնացման պատճառով:

Հայացք Ասիային՝

Ներդրողները ասիական շուկաներում մտահոգված էին չինական արժեթղթերի՝ իրենց 4 ամսյա բարձրագույն մակարդակներից կտրուկ անկումից հետո, ինչը կապված է շուկայական սպեկուլիացիաների հետ, որոնք անհանգստություն են առաջացնում արդեն երկարաժամկետ առումով, երբ քառամյա չինական պարտատոմսերի ռալին բարձրացրեց պարտատոմսերի գները: Այնուամենայնիվ, տնտեսության ընդհանուր հեռանկարը դրական է մնում, քանզի աշխարհի երկրորդ խոշորագույն տնտեսությունը կարծես թե վերականգնվում է 7 անընդմեջ քառորդների անկումից: Համաշխարհային Բանկը ևս գնահատականներ թողարկեց, համաձայն որոնց 2013թ. կանխատեվում է 8,4 տոկոս աճ՝ հաջորդելով 2012 թ. 7,9 տոկոս 13-ամյա նվազագույն մակարդակին:

Այդ ընթացքում, անցած շաբաթ ճնշումը ուժեղացավ ճապոնական նորընտիր կառավարության վրա պետակա միջամտության ավելի ակտիվ քաղաքականություն որդեգրելու առումով աշխարհի երրորդ տնտեսության տնտեսական վերականգնումը արահգացնելու նպատակով: Ճապոնիայի կենտրոնական բանկը արձագանքեց՝ հայտարարելով իր մտադրությունների մասին ձեռք բերել 10 տրլիլիոն իենային ($119 միլիարդ) համաշժեք պետական պարտատոմսեր: Ձեռքբերման ամբողջ ծավալը կհավասարվի 101 տրիլիոն իենայի, իսկ բանկը իր հերթին խոստացավ «վերանայել» ինֆլյացիայի իր պաշտոնական թիրախը արդեն հաջորդ ամիս: Կենտրոնական Բանկի պլանավորած ինտերվենցիան կլինի հինգերորդը 2012թ., երբ Ճապոնիայի Բանկը անմիջականորեն բարձրացրեեց ճապոնական տնտեսության ֆինանսավորումը: Ընդդիմության առաջնորդ Սինզո Աբեի անցած շաբաթվա ընտրությունը, ըստ կանխատեսումների՝ կշարունակի ճնշում գործադրել Կենտրոնական Բանկի վրա կրկնապատկել իր ներկայիս 2 տոկոսանոց ինֆլյացիոն թիրախը և դրդել ավելի ագրեսիվ գործաղությունների տնտեսական անկումը հաղթահարելու նպատակով, որը 2000թ. սկսած առիթ հանդիսացավ ճապոնական տնտեսության թվով չորրորդ ճգնաժամին:

Լայնորեն կանխատեսվում է, որ Աբեի նորընտիր կառավարությունը կներկայացնի նոր հավելյալ բյուջե, որում կներառվի ծախսերի լուրջ աճ ենթակառուցվածքային բնագավառում: Ճապոնիայի տնտեսության վրա, սակայն, նման գործողությունների գործած ազդեցությունը բավականին սահմանափակ կլինի, քանզի երկիրը կանգնած է մարտահրավերի առջև, որը պետական պարտքի չափն է, ինչը արդեն երկու անգամ գերազանցում է տնտեսությունը՝ այդպիսով դժվարացնելով հավելյալ արտասահմանյան պարտքի ստացումը: Ի հավելումն սրան՝ թեպետ ճապոնական բաժնետոմսերը անցած ամիս ցուցադրեցին մոտ 10 տոկոսանոց աճ, տնտեսությունը դեռևս տառապում է թույլ արտահանումից և նվազող արդյունաբերական արտադրանքից, ինչը ավելի է վատթարանում արտահանումների անկման պատճառ դարձաց Չինաստանի հետ առկա լարվածության և ցունամիի ու ատոմային աղետի պատճառով:

Ապրանքային շուկա. նավթ

Ընդհանուր առմամբ արտացոլելով շուկայական ավելի խորը անվստահությունը և ներդրողների մտահոգությունը Միջին Արևելքի անկայունության պատճառով՝ հաշվի առնելով, հատկապես մտահոգությունը Եգիպտոսի քաղաքական իրավիճակի վերաբերյալ և Իրանի հետ պատերազմի վտանգը, նավթի ամսեկան գները անցած շաբաթ փոքր՝ 0,79 տոկոս աճ գրանցեցին (տե՛ս գրաֆիկը) :

Հում նավթի հաշխարհային գներ (ամսեկան տատանումներ)

Մեկ տարվա կտրվածքով, նավթային գների երկարաժամկետ միտումը նվազող էր: Անցած շաբաթ անկումը կազմեց 12,16 տոկոս տարեկան կտրվածքով, մասնավորապես Չինաստանի պահանջարկի թեթևացման և նավթային արտադրության ավելացման ու մատակարարման նկատառումների պատճառով (տե՛ս ստորին գրաֆիկը):

Հում նավթի հաշխարհային գներ (տարեկան տատանումներ)

Ապրանքային շուկայում արժանահիշատակ է նաև ամսեկան կտրվածքով ոսկուգների անկումը, որը կազմեց համարյա 4,7 տոկոս (տե՛ս ստորին գրաֆիկը):

Ոսկու գները (ամսեկան տատանումներ)

Երկարաժամկետ առումով, սակայն, ոսկու գները բավականին բարձր են մնում՝ տարեկան կտրվածքով աճելով 3,8 տոկոսով, քանզի ներդրողները շարունակում են ընկալել ոսկին որպես ապաստարանային ակտիվ (տե՛ս ստորին գրաֆիկը):

Համաշխարհային ոսկու գները (տարեկան տատանումներ)

Միջազգային այլ իրադարձություններից արժանահիշատակ է, որ ռուսական Գազպրոմ ընկերությունը ավարտեց բանակցությունների ղրղզ պաշտոնյաների հետ պետական Ղրղզգազ ընկերության ձեռքբերման վերաբերյալ: Այս գործարքով, որը ուժ կստանա 2013թ. ապրիլի 1-ին, Գազպրոմը Ղրղզստանից ձեռք կբերի Ղրղզգազ ընկերության 75 տոկոսանոց բաժնեմասը, և ակնկալվում է, որ կներդնի ավելի քան 650 միլիոն դոլար Ղրղզգազը մոդերնիզացնելու նպատակով, որպես ռուսական ավելի ընդարձակ ռազմավարության մի մաս, որի նպատակն է ամրապնդել իր դիրքերը Կենտրոնական Ասիայի գազային շուկայում:

Նշենք նաև, որ Անկախ Պետությունների Համագործակցությունում (ԱՊՀ) Բելոռուսի նախագահ Ալեկսանդր Լուկաշենկոն անցած շաբաթ հայտարարեց, որ ազգային արժույթը չիարժեզրկվի: Թեպետ բելոռուսական ռուբլին 2012թ. սկսած կանոնավոր կերպով արժեզրկվում էր, Լուկաշենկոն բացատրեց, որ այդ քայլը այլևս անհրաժեշտ չէ, երկրի ոսկու և արտարժույթի պահուստների աճի շնորհիվ, որոնք այժմ առավել են , քան երբևէ:

Բելառուսի նախագահը խոստացավ նաև ձեռք առնել ցանկացած անհրաժեշտ միջոցներ արժույթի արժեքը պահպանելու նպատակով և նշեց, որ իր երկիրը ավելի ուժեղ ֆինանսական դիրք է գրավում վերջերս Չինաստանի կողմից տրամադրած 1 միլիարդ դոլար ծավալով ցածր տոկոսով վարկի շնորհիվ: Նա ավելացրեց նաև, որ այժմ Բելառուսը Ռուսաստանի հետ բանակցում է մեկ այլ 2 միլիրադ դոլար ծավալով վարկի տրամադրման շուրջ՝ հաջորդելով Մոսկվայի հետ վերջերս եկած համաձայնության հաջորդ տարի Բելառուս տեղափոխել 23 տոննա ռուսական նավթ:

Հայաստանյան իրադարձություններ

Հաշվի առնելով հայաստանյան վստահեցումները եվրոպական առաջնորդներին, որ երկիրը շարունակում է հանձնառություն ունենալ Եվրոպայի հետ ավելի խորը տնտեսական և առևտրային կապեր հաստատելու առումով, Բրյուսելի պաշտոնյաները անցած շաբաթ զգուշացրեցին, որ Հայաստանը ի վիճակի չի լինի Եվրոպական Միության հետ հասնել ընդարձակ ասոցացման պայմանագրի, եթե միանա Ռուսաստանի կողմից առաջարկած մաքսային միությանը:

Այս զգուշացումը, որը հնչեց ԵՄ արտաքին քաղաքականության ղեկվար Քեթրին Աշթոնի մամլո խոսնակ Մայա Կոչիյանչիչի շուրթերով, ամրանգրեց, որ թեպետ Հայաստանը ազատ է յուրաքանչյուր պայմանագրին, այդ թվում նաև երրորդ պետությունների հետ պայմանագրերին միանալու մեջ , սակայն Հայաստանի կողմից արված յուրաքանչյուր քայլ ուղղված յուրաքանչյուր մաքսային միությանը միանալուն համատեղելի չի լինի ԵՄ-ի և Հայաստանի միջև Խորը և Համապարփակ Ազատ Առևտրի Պայմանագրի (DCFTA) հետ: Քանզի Հայաստանը մոտենում է Ազատ Առրտրի Պայմանագրի շուրջ բանակցությունների ավարտին, Ռուսաստանի ճնշումը Հայաստանի վրա մեծանում է: Ռուսաստանը ցանկանում է, որ Հայաստանը անդամակցի մաքսային միությանը, որի անդամ են հանդիսանում Բելառուսը, Ղազախստանը և Ռուսաստանը:

Կոչիյանչիչը բացատրեց, որ ԵՄ-ի համար Հայաստանի անդամակցությունը վտանգի տակ կդնի Ազատ Առևտրի Պայմանագիրը , քանզի մաքսային միությունը ունի միասնական արտքային առրտրի քաղաքականություն և առանձին անդամ պետությունը այլևս չունիինքնիշխան վերահսկողություն արտաքային առևտրային քաղաքականության նկատմամբ: Մոսկվան ավելացրել է մաքսային միությանը միանալու ճնշումը նախկին խորհրդային մի շարք պետությունների վրա, այդ թվում նաև Հայաստանի, որպես առաջին քայլ ռուսական առաջնորդությամբ առևտրային այս բլոկը ավելի լայն, և ամբիցիոզ, Նախկին խորհրդային հանրապետություններից կազմված «Եվրասիական Միության» վերածելու նպատակով:

Մինչև այժմ Հայաստանի կառավարությունը անսասան է մնացել Ասոցացման Պայմանագիրը ավարտելու և ստորագրելու իր հանձնառության մեջ, ինչը կառաջարկի առևտրային և ներդրումային կապերի կարևոր ամրապնդում, ինչպես նաև ավելի լայն մուտք դեպի Եվրոպական շուկաներ: Հայաստանը ընդամենը վերջերս ստոնագրեց վիզային ռեժիմի թեթևացման համաձայնագիր ԵՄ-ի հետ՝ թեթևացնելով վիզային պահանջները այն հայերի համար, որոնք ցանկանում են այցելել ԵՄ պետություններ: Բրյուսելում՝ ԵՄ- Հայաստան համագործակցության խորհրդում ստորագրված այս նորհամաձայնությունը, Հայաստանի քաղաքացիներին առաջարկում է ավելի էժան և հեշտ մուտք այսպես կոչված շենգենյան զոնա, ճամփորդների նոր խմբերին, ինչպիսիք են ուսանողները, գիտնականները և

պետական պաշտոնյաները, ընտրության իրավունքի ավելի հեշտ կանոններ է տրամադրում երկարաժամկետ և կարճաժամկետ շենգենյան վիզաների ձեռքբերման հարցում, ինչպես նաև քայլ առ քայլ մոտեցնում է Հայաստանը և ԵՄ-ն լայնամաշտաբ ասոցացման պայմանագրին:
Իր կողմից, Հայաստանը միակողմանիորեն վերացրել է վիզային պահանջները ԵՄ-ի ազգությունների համար և 2013թ. հունվարի 1-ից ուժի մեջ կմտնի նոր օրենքը, որը ԵՄ-ի քաղաքացիներին Հայաստան մուտք գործելիս հնարավորություն կտա 90 օր անցկացնել առանց վիզայի:

Պրոֆեսիոնալ մոտեցում թրեյդինգին

TeleTRADE-ը FOREX շուկայի հիմնական խաղացողներից է և տիրապետում է աշխարհում ամենալայն ներկայացուցչական ցանցին՝ աշխարհի 20 երկրներում ունենալով 150 գրասենյակներ: Հիմնադրված լինելով 1994թ.՝ TeleTRADE-ը ճանաչված առաջամարտիկ է համարվում խորհրդատվական և միջազգային ֆինանսական շուկաներում ծառայությունների մատուցման բնագավառում